



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Գեղագիտության
Ազգային
Կենտրոն

Հ Ր Ա Ի Է Ր

Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցոյթ-փառատօնին՝

«ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ. ԻՆՔՆԱՃԱՆԱՋՈՒՄ»

խորագիրով

*«Անկախութիւն, անկախ Հայրենիքն,
իրաւունք լինելուց առաջ պարտականութիւն է ...»*

Գ. Նժդեհ

Հայաստանի Հանրապետութեան կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարութիւնը եւ Հենրիկ Իգիթեանի անուան Գեղագիտութեան Ազգային Կենտրոնը 2021 թ.-ին Համահայկական մանկապատանեկան նկարչական ամենամեայ մրցոյթ-փառատօն կը կազմակերպէ՝ «Հայոց պետականութիւն. ինքնաճանաչում» խորագիրով, որ նուիրուած է մեր **պետականութեան անցեալին ու ներկային, ատոնց իմաստաւորումին ու գնահատումին, ապագայի մեր տեսլականին:**

2009 թ.-էն սկսեալ ամէն տարի տեղի ունեցած է Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցոյթ-փառատօն: 2020 թ.-ի տարեսկզբին աշխարհին տիրած համավարակի, որմէ Հայաստանը նոյնպէս անմասն ու անհետեւանք չմնաց, ապա նաեւ տարեվերջին վրայ հասած չարաբաստիկ ու Հայաստանի համար ծանրագոյն հետեւանքներով աւարտուած Արցախեան երկրորդ պատերազմի պատճառով, Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցոյթ-փառատօնի արդէն իսկ ձեւաւորուած գեղեցիկ աւանդոյթը ընդհատուեցաւ:

Սակայն հետամուտ ըլլալով նոր սերունդի հայրենասիրական եւ գեղագիտական դաստիարակութեան Հենրիկ Իգիթեանի անուան Գեղագիտութեան Ազգային Կենտրոնը՝ ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի ու սպորտի նախարարութեան հետ համատեղ, կը վերականգնէ կարճատեւ ընդհատուած աւանդոյթը եւ 2021 թ.-ին պիտի կայանայ Համահայկական մանկապատանեկան մրցոյթ-փառատօնը (պիլոտային տարբերակով) մէկ այլ՝ աւելի ժամանակակից ու նորարարական ձեւաչափով. առցանց ու հեռավար:

Մրցոյթ-փառատօնին կրնան մասնակցիլ 6-18 տարեկան արուեստասէր եւ ստեղծագործական շնորհքով օժտուած հայ մանուկներ եւ պատանիներ ամբողջ աշխարհէն՝



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Գեղագիտության
Ազգային
Կենտրոն

Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի բոլոր կրթօճախներու սաները, ինչպէս նաեւ պարզապէս ստեղծագործող, սակայն որեւէ մասնագիտական հաստատութիւն չյաճախող երեխաները:

2021 թ.-ի մրցոյթ-փառատօնը կ'իրականացուի առցանց ցուցադրութեան, վարպետութեան դասերու, սեմինարներու ու հարցուպատասխանի ձեւաչափով: Ստեղծագործականէն բացի, ան այս տարի պիտի ունենայ արեւի ընդգծուած ուսուցողական-կրթական բնոյթ:

Ընթացակարգի նկարագրութիւն.

Արցոյթի ընթացքին Գեղագիտութեան Ազգային Կեդրոնի կողմէն կը ստեղծուին 3-5 րոպէ /վայրկեան/ տեսողութեամբ 5-7 ուսուցողական տեսահոլովակներ, որոնց միջոցով թէ՛ կեդրոնի, եւ թէ՛ հրաւիրեալ մասնագէտները հայերէնով (անգլերէն եւ ռուսերէն ենթագիրերով) կը ներկայացնեն այն աշխատանքի առաջնային միջոցները /«տեխնիկաները»/, որոնցմով պիտի աշխատին մրցոյթի մասնակիցները:

Տեսահոլովակներ կը պատրաստուին հետեւեալ «տեխնիկաների» վերաբերեալ.

- գեղանկարչութիւն
- խճանկար
- մանրանկարչութիւն
- լինովորագրութիւն/մենատիպ
- աստղնագործութիւն
- կարպետագործութիւն
- զարդարուեստ

Կրթօճախներու եւ գեղագիտական դաստիարակութեան կեդրոններու համար իրենց կողմէ տեսահոլովակները դիտելէն եւ մասնակցութեան յայտը ներկայացնելէն ետք, կը մասնակցին առցանց դասընթացքներուն՝ տեսահոլովակներ պատրաստած նոյն մասնագէտներու մասնակցութեամբ:

Ատկէ ետք յայտատու դպրոցները ինքնուրոյն աշխատանք կը տանին թեմայի շուրջ եւ ընտրուած «տեխնիկայ»-ով աշխատանքներ ներկայացնելու համար:

Ներկայացուած լաւագոյն աշխատանքները կը ցուցադրուին յատուկ հոլովակի միջոցով, իսկ մասնակիցները (կրթօճախները/ԳԴԿ-ները եւ սաները) կը ստանան համապատասխան վկայականներ:



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Գեղագիտության
Ազգային
Կենտրոն

Բոլոր տեսահոլովակները եւ առցանց յայտի յղումը մինչեւ 2021 թ. Ապրիլ ամիս պէտք է տեղադրուի Գեղագիտության Ազգային Կեդրոնի պաշտոնական կայքին մէջ՝ www.nca.am

Ժամկէտներ.

Առցանց դասընթացքներուն եւ մրցոյթին մասնակցելու յայտերը կ'ընդունուին 2021 թ. Մայիսի 1-էն մինչեւ Սեպտեմբերի 15-ը:

Դասընթացքներու սկիզբը՝ 2021 թ.-ի Սեպտեմբերի 15-էն:

Աշխատանքներու ներկայացման վերջնաժամկէտ՝ 2021 թ.-ի Նոյեմբերի 1-ը:

Ամփոփիչ առցանց ցուցադրութիւն՝ 2021 թ.-ի Նոյեմբեր:

Ամփոփ ուղեցոյց.

Գործողութիւններ		Ժամկէտ
Կազմակերպիչներ	Մասնակիցներ	
Առցանց յայտաձեւի տեղադրում կայքին մէջ		մինչեւ 01.04
Հոլովակներու պատրաստում		մինչեւ 01.06
	Յայտերու ներկայացում	01.05-15.09
Դասընթացքներու ժամանակացոյցի կազմում		ընթացիկ
	Հոլովակներու դիտում	ընթացիկ
Դասընթացքներու ժամանակացոյց		01.09-15.10
	Աշխատանքներու ներկայացում	մինչեւ 01.11
Աշխատանքներու գնահատում		Նոյեմբեր
Հոլովակի պատրաստում		
Ամփոփում, պարգեատրում		



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Գեղագիտության
Ազգային
Կենտրոն

Յանելեալ հարցերով կարելի է դիմել.

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն.

հեռ. +374 10 599-647

Էլ.փոստ. spyurg@yahoo.com

Կայքէջ. www.escs.am

Էջ Facebook-ում. «Սփիւռքի բաժին ՀՀ ԿԳՄՍՆ»

Գեղագիտության Ազգային Կենտրոն.

հեռ. 060 83-33-83

Էլ.փոստ. nkarchakan@gmail.com

Կայքէջ. www.nca.am

Էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»